ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 Թ. ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՑ ՀՈՒԼԻՍԻ 1-Ը ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՓԱՐԻԶ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Վարդան Կոստանյան, ՀՀ ՏԿԵՆ նախարարի տեղակալ

2. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Ֆրանսիայի Հանրապետություն (ՖՀ), ք. Փարիզ, 2025 թվականի հունիսի 30-ից հուլիսի 1-ը

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Ֆրանսիական Զարգացման Գործակալություն

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   ՀՀ-ԶՖԳ առաջին տարեկան խորհրդակցություններ

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ՝**

   Քննարկվել են քաղաքային պլանավորման, տարածքային զարգացմանը, ինչպես նաև աղբահանության համակարգի ռազմավարությանն առնչվող հարցեր:

6. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիական Զարգացման Գործակալության առաջին տարեկան խորհրդակցության ընթացքում հանդիպումներին մասնակցել են Ֆրանսիական Զարգացման Գրասենյակի (ԶՖԳ) գլխավոր պատվիրակության, Ֆրանսիայի Եվրոպայի և արտաքին գործերի նախարարության, Ֆրանսիայի ֆինանսների նախարարության գլխավոր վարչության և Ֆրանսիական Զարգացման Գործակալության (ԶՖԳ) նախագծային թիմի ղեկավարների ներկայացուցիչներ:

   Հանդիպմանը քննակվել են քաղաքային զարգացման, քաղաքաշինության, տարածքային զարգացման ռազմավարության և աղբահանության վերաբերյալ թեմաներ:

7. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

   Հանդիպման ընթացքում որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ՝ ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվի առնելով, որ ՀՖԳ հետաքրքված է հանրապետության թափոնների կառավարման ոլորտով, հանդիպման ընթացքում քննարկվել է ՀՖԳ-ի մասնակցության հնարավորությունները «Հայաստանի Հանրապետության 8 մարզերում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ինտեգրված համակարգի ներդրում» ծրագրի իրականացման շրջանակներում: Մասնավորապես՝ ՎՀԵԲ-ի, ՀԲ-ի, ԱՀԲ-ի և ՀՖԳ-ի հետ համատեղ նախատեսվող հանրապետությունում աղբահանության 3 գոտիներում տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների անցկացման և անյուտետև ներդրումային ծրագրերի իրականացման հարցերի մասով:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

07.07.2025թ.